

ԵՐԱԺԻՇՏ



Երևանի Կոմիտասի անվան
Պետական Կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (211-212)

7-8 հունիս-օգոստոս 2023

ԵՊԿ շրջանավարտներին դիպլոմների հանձնումը



Կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ՝ Վաչե Շարաֆյան, ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր՝ Արամ Գովհաննիսյան, Նվագախմբային ֆակուլտետի դեկան՝ Ռուբեն Սմբատյան, Ուսումնական մասի վարիչ՝ Նոնա Ոսկանյան



Երաժիշտների առաքելությունը



ՔՈՍՏՈՆ - Վիկտորյա Ավետիսյանն ու Նունե Հակոբյանը հայ դասական երաժշտության ժառանգության պահպանման ու տարածման առաքելություն են իրականացնում, և դա անում են երաժշտության միջոցով. մարտի 18-ին համերգ Բեդֆորդում:



Վիկտորյա Ավետիսյան

«Թափուև... Ղևիսու...». շնորհանդես Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում



Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեջեր Ռիանա Հարությունյան ԵՊԿ պրոֆեսոր, կոմերտմաստեր՝ Մարգարիտ Սարգսյան



Հայ երգչախմբային երաժշտության տոն Դիլիգանում ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՉՅԱՆԻ և ՀԱՅԿԿԱՆ ԿԱՊԵԼԼԱՅԻ քապիտիկ համերգը



Հայ երգչախմբային երաժշտության տոն Դիլիգանի Միրզոյանի անվան ԳԿՄ ստեղծագործական հանգստյան տան Բեթովենի անվան դահլիճում Գովհաննես Չեքիչյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական կապելլայի բացառիկ համերգը



Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական ֆուլեդում քապիտիկ է լսարան, որը անվանակոչվել է կոմպոզիտորներ ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆԻ, ԿՈՆՍՏԱՆԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ և ԼԵՎՈՆ ՉԱՌԻՇՅԱՆԻ անուններով



Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջում Արամ Սաթյանի, Կոնստանտին Պետրոսյանի և վաղաճառիկ Լևոն Չառլյանի անուններով բացվեց լսարան



"ТУРАНДОТ" на сцене Национального академического театра оперы и балета



Опера "ТУРАНДОТ", Национальный академический театр оперы и балета им. А. Спендиаряна



ԵՊԿ շրջանավարտներին դիպլոմների հանձնումը

Հուլիսի 11-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 2022-2023 թթ. ուսումնական տարվա շրջանավարտներին հանձնվեցին դիպլոմները:

տարիների հետ, որոնց չէր կարող անմասն մնալ կոնսերվատորիան: Այդուամենայնիվ, շատերը նույնիսկ առցանց ու առկա մրցույթների դափնեկիրներ դարձան, հանդես եկան հա-

գրանցեք, հիշելու եք ձեր համակուրսեցիներին, դասախոսներին, երիտասարդության տարիները: Մաղթում են ձեզ երբեք չվիատվել, որովհետև հուսահատվելու ժամանակը և իրավունքը չունենք: Լիներ տո-



2022 - 2023 թթ. ԵՊԿ շրջանավարտներին դիպլոմների հանձնումը

հաննիսյանը և ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը: Նշեցին, որ շրջանավարտների ուսումնառության տարիները հանձնվել են մեր Հայրենիքի դժվարին

մերգներով: «Եվ որքան բարձր լինի ձեր թռիչքը, ինչպիսի բեմահարթակներում էլ հանդես գաք, ինչ հաջողություններ էլ, որ

կուն և մեր գործին» - Սոնա Հովհաննիսյան: Խմբագրական

Երաժիշտների առաքելությունը

Երկու կանայք «Երկիր Նաիրի» նախաձեռնության հիմնադիրներն են: Կազմակերպության անունը սերում է Վահանի Տերյանի պոեզիայի միջոցով տարածված Հայաստանի՝ ուրարտական ժամանակների բանաստեղծական անվանումից:

Կազմակերպությունը հիմնադրվել է 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո՝ Բոստոնաբնակ հայ երաժիշտների կողմից, որոնց մեծ մասը ծնվել և կրթություն է ստացել Հայաստանում: Խմբի անդամները ցանկանում էին ինչ-որ բան անել Հայաստանին օգնելու համար՝ օգտագործելով իրենց ստեղծագործական տաղանդը, և մինչև 2021 թվականը սկսեցին համերգներով հանդես գալ:

Խումբը նախատեսում է մոտ ապագայում ստեղծել պաշտոնական շահույթ չհետապնդող կազմակերպություն, ստանձնելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի աջակցությունը: Նրանց ուշադրության կենտրոնում հատկապես գրադարանն է, որի ֆոնդերը դեռևս թվայնացված չեն: Նրանք դա որակում են որպես հայ ժողովրդի համար ազգային նշանակություն ունեցող առաքելություն:

Ըստ Ավետիսյանի և Հակոբյանի, հայկական ծագում ունեցող դասական երաժիշտներին հաճախ խնդրում են արևմտյան դասական ճանաչված կոմպոզիտորների կողքին հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ կատարել, լինի դա նվագախմբային, գործիքային, թե վոկալ: Եթե, քանի դեռ պարտիտուրները հասանելի չեն, դրսում գտնվող երաժիշտները չեն կարող դրանք կատարել:

Ավետիսյանը մեծո-սոպրանո է, ով ծնվել է Երևանում և ստացել Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ կատարողականության մագիստրոսի կոչումը: Նա սկսել է ելույթ ունենալ Հայաստանի ազգային օպերային թատրոնում, այնուհետև հրավիրվեց Բոստոնի համալսարանի օպերային ինստիտուտ, որտեղ էլ ստացավ իր արվեստագետի դիպլոմը: Նա հանդես է եկել Միացյալ Նահանգներում և Կանադայում՝ կատարելով զլխավոր օպերային դերերգեր, բնակվում է Բոստոնում, որտեղ շարունակում է իր օպերային կարիերան և երգեցողության դասավանդումը:

Նունե Հակոբյանը դասական կրթություն ստացած դաշնակահար է: Սովորել և ավարտել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական և Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցները, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան որպես մենակատար դաշնակահար և կոնցերտմայստեր: 1996 թվականին նա իր ընտանիքի հետ տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ աշխատել է որպես նվագակցող Բոստոնի կոնսերվատորիայում, Մասաչուսեթսի ու Նյու Հեմփշիրի հայտնի դպրոցներում և նվագախմբերում, ինչպես նաև դասավանդել է դաշնամուր:

Կանայք մշեցին, որ երբ իրենց խնդրում են կատարել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, պարտիտուրները շատ դժվար է լինում ձեռք բերել, բացառությամբ Կոմիտասի, Խաչատրյանի և այլոց ամենահայտնի գործերի: Հայ դասական երաժշտության հարստությունը թաղված է արխիվներում և գրադարաններում, հատկապես Կոմիտասի անվան կոնսերվատորիայի գրադարանում (հայտնի է նաև որպես Կ. Ս. Սարաջևի անվան երաժշտական գրադարան): Կոնսերվատորիան ունի բազմաթիվ պատմական ձեռագրեր, գրքեր և պարտիտուրներ, որոնք պետք է դասա-



Նունե Հակոբյան



Վիկտորյա Ավետիսյան, Եղիշե Մամուչարյան

կարգվեն և համակարգվեն, որպեսզի ամբողջ աշխարհում մարդիկ կարողանան օգտվել դրանցից: «Գրադարանը թվայնացման մեծ կարիք ունի», - եզրափակեցին կանայք:

Եվրոպական դասական մեծ կոմպոզիտորների երկացանկի մեծ մասը ներկայումս հասանելի է առցանց՝ տարբեր տվյալների բազաների միջոցով, որոնցից մի քանիսը վճարովի հիմունքներով են: Խմբի երազանքն է մասնաշաղկապները տեսանելի դարձնելը, որպեսզի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները հասանելի դառնան ոչ միայն հայկական ծագումով պրոֆեսիոնալ երաժիշտներին, այլև ամբողջ աշխարհին:

Մոտ մեկ տարի առաջ նրանք մտադրացման թվայնացման նախագծի գաղափարը, իսկ հետո իրենց առաջարկը ներկայացրին անցյալ օգոստոսին Երևանի «Իբիս» հյուրանոցում կայացած «Հայեր, առաջ միասին» ֆորումում:

Երկու երաժիշտներն էլ մշեցին, որ իրենք առավելապես հայ կոմպոզիտորների դասական երաժշտության մեջ են մասնագիտացված, այլ ոչ թե հոգեւոր, ժողովրդական կամ հայկական խնջույքի երաժշտության տարբեր ձևերի: Հայկական ավանդույթներով և ոգով պրոֆեսիոնալների կողմից ստեղծված դասական երաժշտությունը նախատեսվում է ներկայացնել համերգային միջավայրում: Կոմիտասի, Խաչատրյանի, Բաբաջանյանի և այլոց անունները հայ համայնքին քաջ հայտնի են որպես հայ դասական ստեղծագործության ներկայացուցիչներ, ընդ որում շատերի կողմից Կոմիտասը համարվում է այս ամենի նախահայրն ու հիմնադիրը, ու ուսումնասիրությունների համար հիմք են ծառայել հայ գեղջուկ երգերի մաքրամաքուր ձևերը: Դասական երաժշտությունը մեծապես խրախուսվում և

ֆինանսավորվում էր խորհրդային կառավարության կողմից այն ժամանակ, երբ Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր, ինչի արդյունքում ի հայտ եկան բազմաթիվ վարպետ կոմպոզիտորներ և դասական կրթություն ստացած բազմաթիվ երաժիշտներ: Այսօր այդ ժառանգության զգալի մասը խմբի երաժիշտների շնորհիվ ներկայացվում է դրսում:

Այս կոմպոզիտորների որոշ ստեղծագործություններ երբեք չեն տպագրվել: Օրինակ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի տրամադրության տակ են Էդգար Հովհաննիսյանի (1930-1998) ձեռագիր պարտիտուրները, որոնք երբեք լույս չեն տեսել:

Կոնսերվատորիայի պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը հայտնաբերել է Հովհաննիսյանի ձեռագրերը և ղեկավարում է դրանց թվայնացման գործընթացը: Անցյալ ամառ նրան էին դիմել Գիտությունների ազգային ակադեմիայի ՏՏ մասնագետներ, ովքեր տվել էին այդ գործընթացը սկսելու առաջարկել: Կոնսերվատորիայի գրադարանն այդ նպատակով ունի ընդամենը մեկ հին համակարգիչ և մեկ տպիչ: Այժմ նրանք ունեն մասնագետ՝ թվայնացման գործընթացը ինչպես նաև վեբ տիրույթ վերահսկելու համար, սակայն նրանց անհրաժեշտ են միջոցներ ավելի լավ սարքավորումներ ձեռք բերելու համար: Եվ ահա այստեղ է, որ «Երկիր Նաիրի»-ն գալիս է օգնության: Նրանց նպատակն է՝ միջոցներ հայթայթել Կոնսերվատորիային այս աշխատանքում աջակցելու համար, նախ և առաջ գնելով երկու նոր համակարգիչ և պրոֆեսիոնալ սկաներ:

«Երկիր Նաիրի»-ի դրամավաճառ-համերգը տեղի կունենա մարտի 18-ին, ժամը 18.00-ին, Բեդֆորդի 75 Great Road, The First Parish հասցեում:

Երաժիշտների՝ առաքելությունը

Համերգին կմասնակցեն տասներեք երաժիշտներ Բոստոնից և Նոր Ինգլանդից, որոնց մեծ մասը Հայաստանից են և շատերը Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտներ են: Երաժիշտների թվում են՝ Վիկտորյա Ավետիսյանը՝ մեծոսպրանո, Եղիշե Մանուչարյանը՝ տենոր, Լիլիթ Կարապետյան-Շուգարյանը՝ դաշնամուր, Սարգիս Կարապետյանը՝ ջութակ, Նուրե Հակոբյանը՝ դաշնամուր, Լևոն Հովսեփյանը՝ դաշնամուր, Հայկ Հովսեփյանը՝ ջութակ, Անի Հովսեփյանը՝ դաշնամուր, Լիլիթ Մուրադյանը՝ ալտ, Արմենուհի Հովակիմյանը՝ ջութակ, Արփիմե Ազատյանը՝ ջութակ, Քնարիկ Ներկարյանը՝ սոպրանո և Արմեն Ղազարյանը՝ ջութակ: Համերգին կինչեն տարբեր մենահամարներ, քառյակների և այլ անսամբլային կատարումներ: Ավետիսյանը և Հակոբյանը շեշտեցին, որ բոլոր ստեղծագործությունները կկատարեն հայ կոմպոզիտորների գործեր են, թեև երկացանկի ընտրությունը «բազմազան» է լինելու: Նրանց նպատակի մի մասն է՝ հասարակությանը ավելի իրազեկ դարձնել դասական ոլորտում հայերի ստեղծած հարուստ ժառանգությանը: Հակոբյանը նշեց, որ խմբի ներկայիս հիմնական նպատակը համերգի իրականացումն է, և որ առավելություններից մեկն այն է, որ այն «կմիավորի այս տարածքի երաժիշտներին»: Նա ասաց, որ կամաց-կամաց հայ երաժիշտները սկսում են միասին աշխատել, և մարտի 18-ին նվագող բոլոր երաժիշտները տրամադրում են իրենց ժամանակը, որպեսզի ամբողջ հասույթն ուղղվի երաժշտական գրադարանին: Ըստ Հակոբյանի՝ «Գաղափարը Վիկտորյային է եղել, նա միշտ մոտենում ու ասում էր՝ ինչո՞ւ չսկսենք»: Եվ Հայաստանից բազմաթիվ երաժիշտների էլեկտրոնային փոստով նամակ ուղարկեցինք, նրանցից մի քանիսը կոնսերվատորիայի շրջանավարտներ են: Եվ նրանցից շատերը մեծ ուրախությամբ համաձայնեցին նվիրաբերել իրենց արվեստը»: Ավետիսյանը նշեց. «Մենք ունենք հիանալի երաժշտություն՝ հայկական երաժշտություն բոլոր ժանրերում, և ինձ համար սա ոգեշնչող է՝ այս ամենն իրականացնելու համար»: Թամարա Բաբայանը, ով չլինելով երաժիշտ «Երկիր Նաիրի»-ի մեծ ջատագովն է և խմբին օգնում է կազմակերպել համերգը: Նա հայտարարել է, որ «Եվ Նուրե, և՛ Վիկտորիան ելույթ են ունենում Բոստոնի տարածքում, ամբողջ ԱՄՆ-ում և միջազգային մակարդակով, և ոչ միայն նրանք, այլև շատ երաժիշտներ, ովքեր հանդես կգան, շատ լավ հայտնի են այստեղի համայնքում, և նրանք իսկապես հարստացնում են մեր մշակութային կյանքը այստեղ՝ Բոստոնում, և մենք իսկապես երախտագարտ ենք մեր երաժշտությունը լսելու այս հնարավորության համար: Այն մեզ ուղեկցում է մեր կյանքի ամենատխուր, և նաև մեր կյանքի ամենաներջանիկ օրերին»: Նա նաև նշեց, որ Կոնսերվատորիայի գրադարանի թվայնացման նախագիծը շատ կարևոր է այս արժեքավոր փաստաթղթերի մշակութային պահպանման և ապագա սերունդների համար պահպանելու տեսանկյունից: Հակոբյանը վերահաստատեց. «Սա [համերգը] ժողովրդական կամ հոգևոր երաժշտությունն է: Մենք պրոֆեսիոնալ դասական երաժշտություն ենք նվագում, որը գրված է կոմպոզիտորների կողմից՝ համերգային բեմում ներկայացնելու համար»: Նա շարունակեց, որ «Երկիր Նաիրի» խմբի ապագա տեսլականն է ներկայացնել հայկական երաժշտությունը՝ կազմակերպելով դասախոսություններ ու քննարկումներ, դասավանդելով, կրթելով և համերգներ կազմակերպելով: Նրա պատկերացմամբ՝ խումբը պետք է ճյուղավորվի հայկական մշակույթի այլ ոլորտներում՝ ճարտարապետություն, արվեստ, նկարչություն, պատմություն և այլն: Խմբի տեսլականին համահունչ՝ համերգային պատառի վրա պատկերված է ժամանակակից հայ պատկերացմամբ երաժշտության նահապետ Կոմիտաս Վարդապետը: ՀԱՐՐԻ ԲԵՁԵԼՅԱՆ Հովվածը թարգմանված է «The Armenian Mirror-Spectator» պարբերականից Խմբագրական

«Ազնավուր» հիմնադրամ



ՀՀ-ում ճապոնիայի դեսպան Մասանորի Ֆուկուսիման, «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր և վարչակազմի նախագահ պարոն Նիկոլա Ազնավուրը ՀՀ առողջապահության փոխնախարար Արմեն Նազարյանը

Օգոստոսի 30-ին Վանաձորի բժշկական կենտրոնում տեղի ունեցավ նորարարական հիստոպաթոլոգիական լաբորատորիայի պաշտոնական բացումը: Լաբորատորիայի ստեղծումը հնարավոր է դարձել #FondationAznavour-ի և Հայաստանում ճապոնիայի դեսպանատան համագործակցության շնորհիվ:

Բացման արարողությանը ներկա էին ՀՀ առողջապահության փոխնախարար Արմեն Նազարյանը, ՀՀ-ում ճապոնիայի դեսպան Մասանորի Ֆուկուսիման, «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր և վարչակազմի նախագահ պարոն Նիկոլա Ազնավուրը, «Ազնավուր» հիմնադրամի գործադիր տնօրեն տկն. Քրիստինա Ազնավուրը, Վանաձորի բժշկական կենտրոնի տնօրեն Վահագն Մկրտչյանը և այլ հյուրեր:

Նոր լաբորատորիան հագեցած է գերժամանակակից սարքավորումներով, որոնք փորձագետներին հնարավորություն կտան տեղում համալիր հետազոտություններ անցկացնել և ճշգրիտ փաստորոշումներ կատարել այլ բժշկական պրոցեդուրաների համար:

Լաբորատորիայի գտնվելու վայրը ռազմավարական նշանակություն ունի. այն տարեկան կապասարկի մոտավորապես 5000 շահառուի: Մեր նպատակն է Լոռիում և հարակից տարածքներում ժամանակակից փաստորոշիչ ծառայություններից օգտվելու հնարավորություն ապահովել՝ դրանով իսկ նպաստելով երկրում որակյալ առողջապահական ծառայությունների ապակենտրոնացմանը:

Լաբորատորիայի առկայությունն այժմ հնարավորություն կտա տեղում իրականացնել բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող հետազոտական ծրագրեր:

<https://twitter.com/AznavourFound/status/1671095002892578816/photo/1>

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ազնավուր» հիմնադրամը հայտարարում է «AIDA AZNAVOUR» կրթաթոշակային ծրագիր



BOURSES D'ÉTUDES AÏDA AZNAVOUR

Արևի Ազնավուր-Կարվարենցի 100-ամյակի կապակցությամբ «Ազնավուր» հիմնադրամը Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական թուղթի հետ համատեղ սկսում է կրթաթոշակային ծրագիր:

Արևի Ազնավուրը ֆրանսահայ նկարչուհի է, Շառլ Ազնավուրի ավագ քույրը և ֆրանսահայ հայտնի կոմպոզիտոր Ժորժ Կարվարենցի կինը:

Արևի և նրա եղբայրը՝ Շառլը, անբաժան են եղել իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Նրանք միասին արեցին իրենց առաջին քայլերը դեպի արվեստի աշխարհ՝ միաժամանակ երազելով մեծ բեմի մասին և հետապնդելով իրենց երազանքը:

Արևի և Շառլը միշտ նպաստել են երիտասարդ տաղանդների առաջխաղացմանը՝ խրախուսելով նրանց հաղթահարել խոչընդոտները, մշտապես զարգանալ իրենց մասնագիտության մեջ և հետևել իրենց երազանքներին: Այսպիսով, այս կրթաթոշակային ծրագիր շնորհիվ Ազնավուր հիմնադրամը հետապնդում է իրենց առաքելությունը և հարգանքի տուրք է մատուցում Արևիին:

Կրթաթոշակները կտրամադրվեն Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական թուղթի ուսանողներին (Երևան, Հայաստան):

Ներկայացրեք հայտը՝ <https://aznavourcollege.com/page-1/>

#ՇառլԱզնավուր #ԱրևիԱզնավուր #Ազնավուր #կրթաթոշակ

Aznavour Foundation <https://twitter.com/AznavourFound>



Դավիթ Երևանցի, Նիկոլա Ազնավուր

<https://twitter.com/AznavourFound/status/1661743467213754368>

Շառլ Ազնավուրի Երևանում տեղադրվելիք արձանի հեղինակը քանդակագործ Դավիթ Երևանցին է:

Ինչպես հայտնել էինք ավելի վաղ, արձանը կտեղադրվի Ֆրանսիայի հրապարակում 2024 թվականին Ազնավուրի հարյուրամյակի տոնակատարությունների շրջանակում:

<https://twitter.com/AznavourFound/status/1660703727311790093>

«Ես միշտ հպարտացել եմ իմ ծննդյան գարնանային օրով և եղանակների հերթազարդության հետ նրա համապատասխանությամբ: Դրանց ընթացքն իրականում ինչքան էլ ցիկլային է, գարունն է նրանց մեջ առաջինը մնում և իր մեջ պարփակում հաջորդներին: Ներառյալ այն վերջինին, որից վախենում ենք, բայց դեպի որը, ավա՛ր, պետք է առաջանանք միշտ՝ առանց երբևէ կանգ առնելու»: Շառլ Ազնավուր

Խմբագրական

«Թափուն... Անխոս...». շնորհանդես Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճում օգոստոսի 18-ին վերստին դասականության տոնահանդես էր...

տեղծությունների դեպքում կամաց-կամաց ես սկսում զգալ դրանց մերթն հոսքը՝ էներգետիկան: Ես շատ ուրախ եմ, որ ինձ հաջողվեց զգալ այդ հրաշալի տողերը և գտնել դրանց մերդաշնակ մեղեդի:

Յակոբ Այնթապեանը նշեց, որ ինքը բանաստեղծություններ սկսել է գրել դեռ Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում ուսանելու տարիներին...

երկճյուղ լինելու և արեղյանական ու դասական ուղղագրությունների պատճառով, և պարոն Այնթապեանի խոսքով՝ հայությունը, որը «Մեկ ազգ-մեկ հայրենիք» զաղափարախոսությունն է...

Հայաշունչ և հայերենաշունչ մթնոլորտով հագեցած երեկոն եզրափակվեց համերգով...



Յակոբ Այնթապեան



ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյան

ջերմ ընդունելության: Երգի երաժշտության հեղինակը Կոմիտասի անվան Պետական Կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Մարգարիտ Սարգսյանն է...

ծիրով՝ տիկին Մարգարիտի գրած երաժշտությունն ավելի տպավորիչ ու կենդանի է դարձրել խոսքը:

Մարինե Օթարյանը «Թափուն... Անխոս» երգը բնորոշեց որպես դրամատիկ փիլիսոփայությամբ հագեցած ստեղծագործություն...

«Հայոց լեզուն և հայրենատիրությունը» բանախոսությամբ պարոն Այնթապեանը շարադրեց հայապահպանության և Հայաստան պետության գորացման իր տեսլականը:

րոնի մենբեզուի, սպարանո Դիանա Հարությունյանը և ԵՊԿ պրոֆեսոր, կոնցերտմայստեր Մարգարիտ Սարգսյանը կատարեցին հայ դասական կոմպոզիտորների երկեր:

Ելուքը պատրաստեց Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող ՍԻՐԱՐՓԻ ԵՆԳԻՐԱՐՅԱՆԸ

"ТУРАНДОТ" на сцене Национального академического театра оперы и балета

«Спасибо за сказку», – сказала после премьеры, пожимая руку Вячеславу Стародубцеву, Наталья Асмарян – театровед и суфлер оперы...

Солнечным ереванским летом засияла на армянской сцене в блестящем составе труппы Национального академического театра оперы и балета солнечная опера Дж. Пуччини «Турандот»...

В России премьера "Турандот" в постановке Стародубцева с успехом состоялась в 2016 году на сцене Новосибирского театра оперы и балета.

А в Ереване (по приглашению заслуженного артиста РА, директора театра, главного дирижера Карена Дургаряна, при поддержке министерства образования, науки, культуры и спорта Армении) она была поставлена Вячеславом Васильевичем и его творческой командой...

В одном из интервью режиссер говорил, что место и время действия в этой опере – сказочные, а сама история проникнута мистикой. Роковые загадки, жертвенная любовь, перерождение Турандот из ледяной, воинственной в пламенную, любящую женщину...

О постановке на армянской сцене, режиссер сказал: "Музыкально-драматическая насыщенность партитуры Пуччини соответствует плотности роскошных голосов оперной труппы театра, и невероятно подходит южному актерскому темпераменту, поэтому работа над постановкой была скрупулезной, но легкой и радостной"

Режиссеру, благодаря его профессионализму и способности правильно общаться с людьми, за короткий срок удалось подружиться с коллективом, добиться полной творческой отдачи, а результат – такой спектакль, где каждый образ четко выполняет поставленную задачу...

стывая, при этом, все три сцены нашей оперы. И качеством музыкального исполнения – все были на высоте!

Творческий состав ереванской постановки очередной раз доказал мощную культурную связь русского и армянского народов, воплотив идею режиссера в блестящий спектакль, с успехом пополнивший репертуар нашего театра и бурными аплодисментами благодарного зрителя...

ВИКТОРИЯ ПОШОТЯН

Բայ նամակ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի Հանրապետության, Լատինական Միության Միասնական Նախագահների, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և մտավորականությանը

Արցախում ապրող մեր հայրենակիցներն արդեն ամիսներ շարունակ պաշարված են աղբյուրաբանական դեկավարության կողմից: Օր օրի ավելի սրվող պարենային ճգնաժամը էլ ավելի է բարդացրել առանց այդ էլ հոգեբանական ծանր վիճակում գտնվող մեր եղբայրների ու քույրերի կյանքը: Հունանիտար աղետը կարող է ունենալ անդադնալի հետևանքներ: Ցավոք, 21-րդ դարում մեր ժողովուրդը շարունակում է պայքարել սեփական հողում ապրելու անբավարար իրավունքի համար, որը լրի տարածություն չէ, այլ հայրենիք: Խնդիրը բոլորինս է, խնդիրը միայն 120,000 հայերինը չէ, ովքեր ապրում են այդ սուրբ հողի վրա: Բավ է լռել կամ սուկ կոչեր անել: Սիրել երկիրը, ապրել սեփական տանը քաղաքականություն չէ, այլ իրավունք, հայրենասիրություն: Այսօր արցախահայրությունը, որոնց հետ 30 տարվա մեջ տեսել ենք 3 պատերազմ, իրավունք ունեն սեփական հայրենիքում ապրել արժանապատիվ ու անվտանգ:

Մենք դիմում ենք ամբողջ աշխարհի մտավորականությանը, բոլոր մարդկանց: Մի թույլ տվեք, որ բռնապետությունը թեև առած շարունակի ճախրել, քանզի այդ ամենը կարող է նաև դառնալ մախաբեյ ու Ձեր տան դուռն էլ թակել: Մի առաջնորդվեք չեզոքությամբ, բարձրաձայնեք յուրաքանչյուրդ այս մեծ աղետի մասին, ձեր հերթին, ձեր չափով քայլեր իրականացրեք: Մենք դիմում ենք ՄԱԿ-ին՝ թույլ առաջ ապահովելու համար հունանիտար բեռների տեղափոխումը Արցախ, մենք դիմում ենք Միևսկի խմբի համաձայնագրի երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ՌԴ-ի նախագահներին. իրականացրեք հստակ ու պատժիչ գործողություններ արցախահայության նկատմամբ Ալիևի՝ հայաթափման և էթնիկ զտման գործում: Սենդի, հոսանքի, գազի, ջրի վրա ուղիղ արգելք դնելը, առավել ևս, երբ այդտեղ ապրում են երեխաներ, ծերեր, նպատակային բնաջնջման փորձերը քողարկելը անտարբերությամբ իրավամբ նույնպես հանցակից դառնալ է: Բայց մենք հավատում ենք, որ այս ամենն աշխարհում չպետք է տեղ ունենա:

Մենք մեր մասնագիտական առաքելությունը՝ ուղղված հայ երաժշտարվեստի զարգացմանն ու պահպանմանը, անում ենք մեծ սիրով ու պատասխանատվությամբ: Մակայն ամենը մղվում է ետին պլան, երբ գիտակցությանդ մեջ մեխվում է այն միտքը, որ մեզինք մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա կան երեխաներ, ովքեր քնում են քաղցած, կան հիվանդներ, ովքեր չեն կարողանում ստանալ իրենց առաջին օգնությունը, կան ծերեր, ովքեր չեն ապրում իրենց արժանավայել ծերությունը, կան ընտանիքներ, որոնց նվազագույն կոմունիկացիաները հասանելի չեն, և վերջապես կա մեր ազգի մաս, որը մեր բոլորի կարիքն ունի:

Լիառույս ենք, որ երկարատև խաղաղությանը մենք երկար չենք սպասի: Հարգանքներով՝

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, պրոֆեսոր «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի և Մովսես Խորենացի մեդալակիր ԱՐԱՍ ՍԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

COMPOSERS UNION OF ARMENIA



СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ

Открытое письмо президентам Российской Федерации, Республики Франции, США, Генеральному Секретарю ООН и всем людям доброй воли.

Наши соотечественники, проживающие в Арцахе, месяцами находятся в осаде со стороны азербайджанского руководства. Ежедневно нарастающий продовольственный кризис еще больше осложнил жизнь наших братьев и сестер, находящихся в тяжелом психологическом состоянии. Гуманитарная катастрофа может иметь необратимые последствия. К сожалению, в 21 веке наш народ, проживающий в Арцахе продолжает бороться за нерушимое право жить на своей земле, которая является не просто территорией, но и родиной. Это проблема не только для всех нас, но и для 120,000 армян, живущих на этой земле. Любить страну, жить в своем доме - это не политика, а законное право. Сегодня армяне Арцаха, которые в течении 30 лет прошли 3 войны, имеют право жить достойно и безопасно на своей родине.

Мы обращаемся к общественности и интеллигенции всего мира. Не позволяйте азербайджанской диктатуре продолжать начатое, потому что это может стать прецедентом и постучать в дверь вашего дома. Не руководствуясь нейтралитетом, поднимите голос об этом великом бедствии. Мы обращаемся в ООН с просьбой обеспечить переброску гуманитарных грузов в Арцах. Обращаемся также к президентам стран-сопредседателей Минской группы, США, Франции и Российской Федерации: провести четкие акции для нормализации ситуации в Арцахе. Но мы считаем, что все это недопустимо.

С большой любовью и ответственностью мы выполняем свою профессиональную миссию, направленную на развитие и сохранение армянского музыкального искусства. Но все отодвигается на второй план, когда понимаешь, что в нескольких сотнях километров от нас есть дети, которые спят голодными, есть больные, которым не могут оказать первую помощь, есть старики, не дожившие до своей заслуженной старости, есть семьи, которым не доступны минимальные средства связи, и, наконец, есть часть нашего народа, которая нуждается во всех нас. Мы надеемся, что нам не придется долго ждать прочного мира.

С уважением, Президент Союза композиторов Армении Заслуженный деятель искусств РА, композитор, профессор, кавалер медали «За заслуги перед Отечеством» 1-ой степени и медали Мовсеса Хоренаци

Արամ Սատյան

ARAM SATYAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

COMPOSERS UNION OF ARMENIA



СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ

Բայ նամակ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի Հանրապետության, ԱՄՆ-ի նախագահներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և մտավորականությանը

Արցախում ապրող մեր հայրենակիցներն արդեն ամիսներ շարունակ պաշարված են աղբյուրաբանական դեկավարության կողմից: Օր օրի ավելի սրվող պարենային ճգնաժամը էլ ավելի է բարդացրել առանց այդ էլ հոգեբանական ծանր վիճակում գտնվող մեր եղբայրների ու քույրերի կյանքը: Հունանիտար աղետը կարող է ունենալ անդադնալի հետևանքներ: Ցավոք, 21-րդ դարում մեր ժողովուրդը շարունակում է պայքարել սեփական հողում ապրելու անբավարար իրավունքի համար, որը լրի տարածություն չէ, այլ հայրենիք: Խնդիրը բոլորինս է, խնդիրը միայն 120,000 հայերինը չէ, ովքեր ապրում են այդ սուրբ հողի վրա: Բավ է լռել կամ սուկ կոչեր անել: Սիրել երկիրը, ապրել սեփական տանը քաղաքականություն չէ, այլ իրավունք, հայրենասիրություն: Այսօր արցախահայրությունը, որոնց հետ 30 տարվա մեջ տեսել ենք 3 պատերազմ, իրավունք ունեն սեփական հայրենիքում ապրել արժանապատիվ ու անվտանգ:

Մենք դիմում ենք ամբողջ աշխարհի մտավորականությանը, բոլոր մարդկանց: Մի թույլ տվեք, որ բռնապետությունը թեև առած շարունակի ճախրել, քանզի այդ ամենը կարող է նաև դառնալ նախադեպ ու Ձեր տան դուռն էլ թակել: Մի առաջնորդվեք չեզոքությամբ, բարձրաձայնեք յուրաքանչյուրդ այս մեծ աղետի մասին, ձեր հերթին, ձեր չափով քայլեր իրականացրեք: Մենք դիմում ենք ՄԱԿ-ին՝ թույլ առաջ ապահովելու համար հունանիտար բեռների տեղափոխումը Արցախ, մենք դիմում ենք Միևսկի խմբի համաձայնագրի երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ՌԴ-ի նախագահներին. իրականացրեք հստակ ու պատժիչ գործողություններ արցախահայության նկատմամբ Ալիևի՝ հայաթափման և էթնիկ զտման գործում: Սենդի, հոսանքի, գազի, ջրի վրա ուղիղ արգելք դնելը, առավել ևս, երբ այդտեղ ապրում են երեխաներ, ծերեր, նպատակային բնաջնջման փորձերը քողարկելը անտարբերությամբ իրավամբ նույնպես հանցակից դառնալ է: Բայց մենք հավատում ենք, որ այս ամենն աշխարհում չպետք է տեղ ունենա:

Մենք մեր մասնագիտական առաքելությունը՝ ուղղված հայ երաժշտարվեստի զարգացմանն ու պահպանմանը, անում ենք մեծ սիրով ու պատասխանատվությամբ: Մակայն ամենը մղվում է ետին պլան, երբ գիտակցությանդ մեջ մեխվում է այն միտքը, որ մեզինք մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա կան երեխաներ, ովքեր քնում են քաղցած, կան հիվանդներ, ովքեր չեն կարողանում ստանալ իրենց առաջին օգնությունը, կան ծերեր, ովքեր չեն ապրում իրենց արժանավայել ծերությունը, կան ընտանիքներ, որոնց նվազագույն կոմունիկացիաները հասանելի չեն, և վերջապես կա մեր ազգի մաս, որը մեր բոլորի կարիքն ունի:

Լիառույս ենք, որ երկարատև խաղաղությանը մենք երկար չենք սպասի:

Հարգանքներով՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, պրոֆեսոր «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի և Մովսես Խորենացի մեդալակիր

Արամ Սատյան

ԱՐԱՍ ՍԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

COMPOSERS UNION OF ARMENIA



СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ

An open letter to the presidents of the Russian Federation, Republic of France, the United States of America, the Secretary General of the United Nations and to all people of good will.

Our compatriots living in Artsakh have been under siege by the Azerbaijani leadership for months. The daily growing food crisis has further complicated the lives of our brothers and sisters who are in a difficult psychological state. A humanitarian catastrophe may have irreversible consequences. Unfortunately, in the 21st century, our Armenians living in Artsakh continues to fight for the inseparable right to live on their land, which is not just a territory, but a homeland. This is a problem not only for all of us, but also for the 120,000 Armenians living on this land. To love the country, to live in one's own home is not a policy, but a legal right. Today, the Armenians of Artsakh during 30 years of 3 wars have the right to live with dignity and safety in their homeland.

We appeal to the public around the world. Don't let the azeri dictatorship continue what it started because it could set a precedent and knocks your door. Without neutrality, raise your voice about this huge disaster. We appeal to the UN with a request to ensure the transfer of humanitarian cargo to Artsakh. We also appeal to the presidents of the co-chairing countries of the Minsk Group, the United States, France and the Russian Federation: to take clear actions to normalize the situation in Artsakh. But we believe that all this is unacceptable.

With great love and responsibility, we fulfill our professional mission aimed at the development and preservation of the Armenian musical art. But everything is relegated to the background when you realize that a few hundred kilometers from us there are children who sleep hungry, there are sick people who cannot be given first aid, there are old people who have not lived to their well-deserved old age, there are families who do not have access to minimal means of communication, and, finally, there is a part of our people who need all of us. We hope that we will not have to wait long for a lasting peace.

Sincerely, President of the Composers Union of Armenia Honored Artist of the Republic of Armenia, composer, professor, holder of the 1st degree medal "For Services to the Fatherland" and the Movses Khorenatsi medal

Արամ Սատյան

ARAM SATYAN

“СЕГОДНЯ ГЛАВНОЕ - НАЙТИ ВЫХОД ИЗ СЛОЖИВШЕЙСЯ СИТУАЦИИ И ДОСТИГНУТЬ ПОСТАВЛЕННОЙ ЦЕЛИ” ЛЕВОН САРДАРЯН

Արցախի երաժշտագետ Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի երաժշտական տեսական դասընթացների դասախոս Նինա Հակոբյանը երկար տարիներ է, որ համագործակցում է Երևանի պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության գիտական շրջանակների հետ: Նա մասնակցում է գիտաժողովներին իր ներկայությամբ և հողվածներով և հրատարակվում է «ԵՊԿ հրատարակչության» տարբեր հրատարակչություններում և երաժշտական մասնագիտական մամուլում ինչպես ԵՊԿ և այնպես էլ Հայաստանի կոմպոզիտորների միության պարբերականներում: Սույն հողվածը Ն. Հակոբյանի երաժշտության մասին գրքից մեկ հողված է: Գիրքը նվիրված է Արցախի կոմպոզիտորներին գրվել և ավարտվել է բոլորովին վերջերս և հրատարակվելու է զուգահեռաբար և՛ Ստեփանակերտում, և՛ Երևանում որով երաժշտագիտական միտքը շրջանցելու է շրջափակումը:

Խմբագրակամ

Нина Акопян
О музыке



6 июля 2023 года в Степанакерте во Дворце культуры и молодежи состоялся концерт Государственного оркестра народных инструментов совместно с Государственным камерным оркестром Арцаха. На концерте присутствовали представители министерства образования, науки, культуры и спорта РА.

В концерте приняли участие солисты: Лилит Петросян, Оксана Хачатрян, Зара Мусаелян, Шираз Исаханян, Концертная программа состояла из произведений армянских и зарубежных композиторов. Список довольно внушительный: М. Екмалян (Свят,Свят), М. Бегларян (Цветущая вишня), Р. Петросян (Танцевальная сюита), Х. Аветисян (Журавли), М. Бегларян (Мелодии Наири), Х. Аветисян (Полюбил), Э. Багдасарян (Восточный танец), Й. Брамс (Венгерский танец), Г. Перперян (Анор), Э. Оганесян (Танец из балета “Мармар”), Л. Сарьян (Серенада), народная песня “Алагяз”, Э. Мирзоян (Быстрый), А. Экимян (Добрый аист), М. Бегларян (Армянские пьесы). Концертная программа завершилась песней А. Ахвердяна “Мой Арцах”.

Художественным руководителем и дирижером Государственного оркестра народных инструментов Арцаха является Левон Сардарян.

Левон Сардарян родился в 1967 г. в Ереване. Родители будущего музыканта – Людмила и Александр Сардаряны – родом из Карабаха (сел Кармираван и Сейсулан Мартакертского района, после войны 2020 г. оба села не подчиняются армянской стороне). После переезда в Армению семья Сардарянов обосновалась в г. Севане. Здесь Л. Сардарян окончил среднюю общеобразовательную школу N1 им. Х. Абовяна и Детскую музыкальную школу. В ДМШ Левон учился по классу тара у Гайка Ташяна. Желая продолжить музыкальное образование, Л. Сардарян сдает экзамены в музыкальное училище им. Р. Меликяна в г. Ереване. Два года безуспешных попыток приводят абитуриента к мысли попробовать свои силы в Степанакерте. Надо сказать, что в те годы редко кому удавалось с первой попытки поступить в музыкальное училище им. Саят-Новы, ибо по конкурсу на одно место приходилось до 7-8 абитуриентов. Л. Сардарян, преодолев серьезный конкурс, поступает в Степанакертское музучилище, где с 1984-1988 гг. обучается в классе тара у педагога Ромы Даниеляна и на последнем курсе – у Дереника Мелкумяна. Л. Сардарян также играет в оркестре народных инструментов при музучилище, организованном и руководимом Левоном Саркисяном. Так как мы учились на одном курсе, добавлю, что Левон был ответственным студентом и активным участником различных внутриучилищных мероприятий.

Годы учебы в Ереванской государственной консерватории им. Комитаса (1988-1993) стали краеугольным камнем в профессиональном становлении молодого музыканта. Студента консерватории поразила необычайная красота и бархатистость звучания оркестра народных инструментов. Именно во время учебы в ЕГК им. Комитаса у Л. Сардаряна зарождается мечта создать оркестр народных инструментов в Арцахе с более расширенным составом.

Л. Сардарян с особой теплотой вспоминает своих учителей: Карине Левоновну Атанесян, Микаела Хачатуровича Аветисяна (сына Хачатура Аветисяна), Якова Михайловича Восканяна – педагогов по оркестровому дирижированию.

По окончании консерватории Л. Сардарян преподает в классе тара в ДМШ родного Севана, где некогда учился сам. Параллельно в сотрудничестве с Геной Бадалянном руководит оркестром народных инструментов Ансамбля танца при Доме культуры Севана.

В 1999 г. Л. Сардарян возвращается в послевоенный Степанакерт с намерением продолжить педагогическую деятельность. Однако по причине недобора учащихся в музучилище, молодому специалисту не удается трудоустроиться. Тогда Л. Сардарян принимает решение сменить род деятельности. Окончив Евразийскую богословскую семинарию в Ереване, он по сегодняшний день является пастырем Евангельской церкви в Степанакерте.

Спустя годы Нарине Эдуардовна Агабалян, занимавшая тогда пост министра Культуры и по вопросам молодежи НКР, предложит Л. Сардаряну вернуться к профессии музыканта-педагога. Так Л. Сардарян стал работать в оркестре народных инструментов при музыкальном колледже под руководством



Левон Сардарян



Григория Саркисяна.

Спустя некоторое время при посредничестве Ваграма Арзуманяна, завуча муз.колледжа, состоялось знакомство с представителем министерства культуры НКР Апресом Маркряном.

В тот период со стороны министерства культуры шла подготовка к организации Республиканского конкурса среди учащихся ДМШ и ДШИ на лучшего исполнителя на национальных инструментах и народной песни. Для проведения репетиций были созданы все условия для школьников: специальный транспорт доставлял учащихся из районов в столицу, где были забронированы гостиничные номера для комфортного проживания детей вдали от семьи. Л. Сардарян выступил в качестве члена жюри данного конкурса, а затем по предложению министерства культуры НКР создал и возглавил оркестр народных инструментов из числа юных конкурсантов. Художественному руководителю и дирижеру новоиспеченного оркестра удалось в сжатые сроки подготовить три произведения (народные песни в обработке Х. Аветисяна и Л. Сардаряна) и успешно выступить вне конкурсной программы на второй день в рамках 4-го Международного фестиваля классической музыки Тнджре – 2015, посвященного юбилею великого И.С. Баха в Чартаре. Участники фестиваля из 11 стран Европы и Азии, а также Армении и Арцаха по традиции в тот день посетили символ фестиваля – гигантский платан, растущий в Мартунинском районе.

Уже в сентябре того же года юношеский оркестр народных инструментов по предложению Л. Сардаряна был объединен с оркестром народных инструментов при музыкальном колледже им. Саят-Новы. Так воплощалась в жизнь студенческая мечта музыканта о создании большого оркестра народных инструментов в Арцахе. Оркестр под управлением Л. Сардаряна объездил с концертами ряд районов НКР. Выбор конкретного места выступления был продиктован определенным условием: для размещения оркестрантов требовалось наличие большой сцены.

С января 2020-го года коллектив получил статус Государственного оркестра народных инструментов Арцаха.

За последние годы Оркестр народных инструментов под управлением Л. Сардаряна выступил совместно с государственным ансамблем песни и танца “Мы и наши горы”; дал ряд концертов, приуроченных к значимым датам: Вечер памяти

Х. Аветисяна, к 24 апреля, также к празднику 8 марта и др.

Арцахский оркестр народных инструментов под управлением Левона Сардаряна не раз принимал участие на республиканских конкурсах оркестров народных инструментов, проводимых в Армении, заняв дважды первые места, а в очередном конкурсе – удостоился специального приза.

Последствия длящейся более полугодом блокады ощущаются не только в изменившемся режиме повседневной жизни арцахцев – нехватка продуктов первой необходимости, в том числе хлеба, сахара, соли; медикаментов различного назначения; отсутствие газа, транспорта, частично света, интернета... Сегодняшняя действительность влияет и на работу творческих коллективов, заставляя художественных руководителей искать нестандартный выход из сложной ситуации. Арцахские студенты, участники оркестра, обучающиеся в ЕГК им. Комитаса – тарист и ка манчист, не смогли принять участие на июльском концерте. Заказанный сантур так и не доехал до Степанакерта, оставшись на полпути в Горисе... Так возникла идея совместного выступления двух оркестров – академического и народных инструментов на одной сцене. И насколько органично был подобран и обработан репертуар, настолько органично и, на первый взгляд, необычно смотрелись вместе два творческих коллектива: шви, дудук, уд, бамбир, канон, ви-

НИНА АКОПЯН
музыковед
Степанакерт, Арцах

Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում բացվել է լսարան, որը անվանակոչվել է կոմպոզիտորներ ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆԻ, ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ և ԼԵՎՈՆ ՉԱՌԷՅԱՆԻ անուններով:



Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆԻ, ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ և ԼԵՎՈՆ ՉԱՌԷՅԱՆԻ անուններով բացված դասարանը նկարում Լ. Չառչյանի դուստրը՝ Անահիտ Չառչյանը



Օգոստոսի 7-12-ը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրանի «Պոլիտեխնիկ» ուսումնառական առարկայի ճամբարում տեղի ունեցավ «Միասնության ուժը 2023» ուսանողական-երիտասարդական, ռազմահայրենասիրական ամենամյա հավաքը:

Հունիսի 26-ին ERASMUS+ ծրագրի շրջանակներում կայացավ հանդիպում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավար Սոնա Հովհաննիսյանի և Կառուստի «Vytautas Magnus» / Vytautas Magnus University (Vytauto Didiojo universitetas) / համալսարանի Երաժշտական ակադեմիայի ղեկավար Սաուլիուս Գերուլիսի, ուսումնական գծով ղեկավար տեղակալ Դայվիս Բուկանտայտեի և միջազգային հարաբերությունների համակարգող Դոմինիկաս Սիմոնիսի հետ:

«Նրանից, ում լսում են, դեպի նա, ում լսում են...» (From the one who is heard to the one who is listened to) - Լիտվայի մեկդարյա պատմություն ունեցող կրթության ապրում է այսպիսի նշանաբանով: Համալսարանի Երաժշտական ակադեմիայի ֆակուլտետի հետ մեր բուհի համագործակցությունը երկարամյա օրինակներից է: Այս անգամ էլ քննարկվեցին հետագա քայլերն ու հնարավորությունները:



https://www.facebook.com/photo/?fbid=744346267695812&set=pcb.744346421029130&locale=tr_TR

Հունիսի 26-ին ՀԲԸՄ համերգարահուում կայացավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Կոմպոզիցիայի ամբիոնի բուհական «Հարություն Դելլալյան մրցույթ»-ը: Երիտասարդ կոմպոզիտորները գրել էին մրցույթի այս տարվա պահանջներին համապատասխան ստեղծագործություններ՝ գործիքային դուետներ: Կատարողական կազմը կոնսերվատորիայի դաշնամուրային ու Լարային գործիքների ամբիոնների այն ուսանողներն էին, ովքեր պատրաստակամորեն մասնակցում էին ամենատարբեր մախազծերում: Ունկնդիրը ոչ միայն հնարավորություն ունեցավ ժյուրիի հետ միասին ծանոթանալ բոլոր յոթ գործերին, այլ նաև լսել երիտասարդ հեղինակների մեկնաբանություններն մրցույթային ստեղծագործությունների մասին:

«Դելլալյան մրցույթ»-ի արդյունքները՝ 1-ին մրցանակ
ԳՐՈՒ ԻՍՊԻՐՅԱՆ (Մագիստրոսական 1-ին կուրսի ուսանող) - Dialogue ջութակի և դաշնամուրի համար, (Արամ Հովհաննիսյանի դասարան)
Կատարողներ՝ Մարիա Մաճկալյան (ջութակ)
Թերեզա Մարկոսյան (դաշնամուր)



Հայաստանի 200 ուսանողների շարքում էին նաև մեր կոնսերվատորիականները: Ա կ ա մ վ ո ռ ա ս ո ղ ա գ ե տ Գրիգոր Գուրգալյանի անունը կրող նարնջագույն ճակատի 8-րդ ջութակը ներկայացնում էին ակադեմիական երգեցողության մասնագիտացմամբ ուսանողներ՝ Անի Պետրոսյանը (2-րդ կուրս), Նարեկ Խաչատրյանը (3-րդ կուրս), Արման Գրիգորյանը (4-րդ կուրս), Սամվել Եփրեմյանը (2-րդ կուրս), ջութակահար Նոնա Սարգսյանը (2-րդ կուրս), ավտահար Նարե Թորոսյանը (2-րդ կուրս):

Երգեցողության մրցույթի 1-ին մրցանակն ու պատվոգիրը կոնսերվատորիականներին էր, իսկ ջութակահար Նոնա Սարգսյանը հաղթեց «Լավագույն ձայն» անվանակարգում:

Как армянин, я Арарат люблю,
Как армянин, с ним вместе я скорблю.
Туман его, дыхание его
Сгушаются у сердца моего...
Расул Гамзатов «Я смотрю на Арарат».

Ծնունդով Դաղստանից, խորհրդային պոետ և հասարակական գործիչ Ռասուլ Համզաթովի 100-ամյակի առթիվ իր հայրենիքում հունիսի 30-ից հուլիսի 5-ը կայացել են միջազգային երկու փառատոն՝ «Горцы» և «Наследие»: Հայաստանը ներկայացնում էր «Հայաստանի ձայներ» ուսանողական վոկալ անսամբլը՝ Ջագ-փոփ երաժշտության ամբիոնի ջագ-երգեցողության դասարանի դասախոս Մերի Կարապետյանի ղեկավարությամբ: Անսամբլի կազմում էին նաև մեր ուսանողներ Արևիկ Սիմոնյանը (2-րդ կուրս), Թերեզա Անտոնյանը (3-րդ կուրս) և Սաթենիկ Սահակյանը (3-րդ կուրս): Բազմաժանր ծրագրում հնչեցին Ա. Հեքիմյանի, Ա. Բա-

բաջանյանի երգերը, ինչպես նաև Կոմիտասի «Ես սարեն կուզայի» երգը՝ Ջագ-փոփ երաժշտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Նարինե Ջարիֆյանի գործիքավորմամբ: Մասնակիցներին շնորհվեցին Դաղստանի հանրապետության մշակույթի նախարարության դիպլոմներ և հուշանվերներ:



Կուլինսկի շրջանի վարչական ղեկավար Շամիլ Ռամազովը ղեկավար Սոնա Հովհաննիսյանին ուղղված շնորհակալական ուղերձում բարձր է գնահատել Երևանյան կոնսերվատորիայի ներկայացուցիչների փայլուն ելույթները՝ առանձնահատուկ նշելով Նարինե Ջարիֆյանի գործիքավորմամբ Կոմիտասի ստեղծագործության մեծ արձագանքը:



Հեղինակի մեկնաբանությամբ այստեղ արտահայտել է բանավեճը երաժշտականացնելու, հարցերին համաձայնվել-չհամաձայնվելու իրավիճակ, որտեղ վերջում զրուցակիցները գալիս են ընդհանուր հայտարարի:

Լսելի ռեպետիտիվ սկզբունքն ստեղծագործության ընթացքում ասես նախապատրաստեց ու ընդգծված մուտք տվեց՝ ազգային դարձվածքի շուրջ կառուցված էպիգրֆի համար: 2-րդ մրցանակ՝

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ (բակալավրական 3-րդ կուրսի ուսանող) – Սոնատինոս պլտի և դաշնամուրի համար, (Ստեփան Ռոստոմյանի դասարան)
Կատարողներ՝ Սոնա Թուրաբյան (պլտ)
Մերի Շարբաթյան (դաշնամուր)

Հեղինակը նշեց, որ փորձել է հետհայացքով նայել «սոնատ» սկզբունքին և ձգտել է վերադառնալ տոնալ երաժշտությանը: Ալտի մենախոսությամբ նախաբանն իր զուսպ տրամադրությամբ պահեց ամբողջ ստեղծագործության լարումը:



Մրցանակակիրները և կատարողները

Ելեն Ադամյան (դաշնամուր)
Օստինատ «համառությունը» դաշնամուրի մոտ, ապա՝ թավջութակի պիցցկատոյով խոսքը միանգամից ցույց տվեց հեղինակի յուրահատուկ ձեռագիրը: Սինիմալիզմի գեղագիտությունը նախընտրող հեղինակը նպատակ ուներ արտահայտել ռեպետիցիոն մաթորամինորային ակորդներից դեպի «open» ձև ձգտող կառուցվածք:

3-րդ մրցանակ՝
ԱՐԵԳ ՉԱԼՅԱՆ (բակալավրական 3-րդ կուրսի ուսանող) – «Այն, Նա» ջութակի և դաշնամուրի համար
Կատարողներ՝ Իվանե Եսայան (ջութակ)

Ելեն Ադամյան (դաշնամուր)
Հեղինակը փորձել է երկմասանի գործի սահմաններում արտահայտել մարդկային էության երկու կողմերը՝ խիստ բանական գիտակցությամբ «Այն»-ը ու ռոմանտիկ, զգացմունքային «Նա»-ն: Հեղինակը բնորոշեց առաջին մասը որպես «պսևդոպոլիֆոնիկ», որտեղ ֆուգայի թեման հնչում է վերջում՝ հաջորդելով բուն զարգացում-մշակմանը:

https://www.facebook.com/photo/?fbid=745325757597863&set=a.485914906872284&locale=tr_TR

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՄԵՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՏԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴՐՈՒՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈՍԿ ՍԵՐԳԵՅ ՍՄՐԱՅԱՆ, ԳՐԶՐ ՇԱԳՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿՐԻՍՏՅԱՆ Թողարկման պատասխանատու՝ ԳՐԶՐ ՇԱԳՅԱՆ Խմբագիրներ՝ ԱՆՈՒԸ ԿՐԻՍՏՅԱՆ (հայ, լեզու), ՍՈՆԱ ԱՆՍՈՒՐՅԱՆ (ռուս, լեզու) Գեղարվեստական խմբագիր՝ ԳՐԶՐ ՀՈՎՀԵՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.08.2023: Գինը 200 դրամ: Տպագրանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է րացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՋԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունը նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
<http://www.conservatory.am>,
E-mail: yerazhisht@gmail.com
<https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

